

Պիտի կանգնին գեղեցմանին մէջ իրենց ,  
 մի անհամբեր ճեռոտն , ճեռոտն ականալիչ  
 Պիտի սպասեն վարդաբնիկը գալուստին  
 Արշալոյսի մ'Արշալոյսի մը՝ որուն  
 (Հաւատացէ՛ք ինձ , Մայրեր , )  
 ես ուռնամայր կ'առնեմ . . .

Գ. ՎԱՐՈՒԹԱՆ

30 Ապրիլ 1906



## Հ Ա Յ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը

(Շար.)

**Ի ԵՏՈՒՆԻՔ.** — Բուն կայեան. Թովմա Արծ-  
 րունիի համեմատ , Ոստան՝ Վանայ ծովուն հա-  
 րաւային-արեւելեան ալիք։ Բնիկ հայ նախարա-  
 րութեան հնագոյններէն մէկը ըլլալ կը թուի,  
 այնքան բնական եղած երկրին, որ Բզնունիներուն  
 նման իր անունը առած է Վանայ լճին որ կը  
 կոչուէր նաև Ռշաունեաց ծով (Բիւզանդ. Գ. Ժ)։  
 Ռշաունեաց նախարարը Վանայ ծովուն մէջ ամ-  
 լաց ունէր իրեն Աղթամար կղզին, և Բիւզանդի  
 երկու տեղ գրածը ակնարկութիւն մը կրնայ  
 համարուիլ Վան քաղաքն ու բերդն ալ Ռշաու-  
 նիներուն սեպհակապետութիւնը ըլլալուն (Բիւ-  
 զանդ, Գ. ԺԹ. և Ե. ԼԷ)։ Բզնունիներուն և Ռըշ-  
 աունիներուն միապէս իրենց անունը Վանայ ծո-  
 վուն տալէն, և թէ մեծ ձգնաժամերու մէջ ի-  
 րարու օգնական և ապաւեն հանդիսանալէն (ինչ-  
 պէս երբ գաւառապետութեան պատմէն խուսող և  
 թաքնող Բզնունեաց նախարարին կինն ու որդիքը  
 Ռշաունեաց պատկանող Աղթամար կղզին զրկը-  
 ւեցան իբր ապաստան) կը նշմարուի սերտ կոպ  
 երկու նախարարութեանց մէջ, և անշուշտ հա-  
 մահաւասար հին ծագումը Ասոր ուժ տալ կը  
 թուի հաւանական ստուգարանութիւնը Ռշաունի  
 անուն որ կը յիշեցնէ Գարեհի արձանագրին  
 Բաբելոնեան հաստաւածին մէջ Հայաստանին տըր-

ւած «Ռւաշաու» յորջորջումը, որ Հրաշաու, Հըշ-  
 աու, և Ռշաու (հօր=) եղած է. որմէ՞ Ռըշ-  
 աունիք։ Բիւզանդ Ռշաունեաց նախարարին կա-  
 րեորութիւնը կը յայտնէ կոչելով ան «մեծ իշ-  
 խանն, աշխարհասէրն» մեծ ծառայն (vassal)  
 արքային Հայոց՝, անոնց տոհմն «աւագ տոհմ»։

Խորենացի Ռշաունիները կցելով Գողթնեցի-  
 ներուն հետ (թէև «Գողթնեցի» նախարարական  
 տուն գոյութիւն չունի, այլ ծանօթ է լոկ Գող-  
 թըն գաւառի իշխան) Ռշաունիները Արևակա-  
 նէն հաստաւած՝ կ'անուանէ, բայց թէ էրբ և ինչ  
 պատճառով այդպիսի հաստաւած մը եկած ու  
 հաստատուած է Ռշաունիներու հետեց գրաւած  
 երկիրը, լուս կ'անցնի։ Յեղակցութիւն կարելի  
 է ենթացրել Ռշաունեաց երկրի և Գողթն գա-  
 ւառի դրացի բնակիչներուն մէջ. բայց Վանայ  
 հարաւակողմի բնակ Ռշաունիներու և Արևակա-  
 նոհմի մէջ՝ դժուար է հաւատալ գէթ առանց  
 մանր պարագաներով ցուցման։ Աւանդութեան  
 (եթէ կար այնպիսի բան) անորոշութիւնը անկէ  
 յայտնի է որ Խորենացի անմիջապէս կ'աւելցնէ  
 «Ու գիտեմ թէ յանուն արանցն զգաւառն ան-  
 ուանեալ, և թէ յանուն գաւառացն զնախարա-  
 րութիւնն կոչեալաւ»։ Շատ չափ կարելի է են-  
 թագրել թէ թէպէտ Ռշաունիներու ծագումը՝  
 Բզնունիներուն նման՝ Վանեան թագաւորներու  
 ժամանակէն սկիզբ առած՝ բնիկ հայ է, յետոյ՝  
 Եթանեան ցեղերու եղովն՝ հաստաւած մը ասոնցմէ  
 եկած խառնուած է անոնց։

**ԽՈՐԵՆԱՆԻՔ.** — Ոստան անծանօթ. եր-  
 կիր՝ Տարսերբանի մէջ. «ի կողմանս Հիւսիսայ  
 ծովուն աղւոյ» (Վանայ ծովուն հիւսիսակողմը)  
 ուրեմն մերձակայ Բզնունիներուն և Մանաւազ-  
 եանց երկրին։ Աշխարհագրական այս մերձաւո-  
 րութիւնն ըլլալու է որ Խորենացիի մտքին մէջ  
 մերձեցում մը ներշնչէր է այս երկր մեծ նա-  
 խարարութեանց մէջ, որով խառն ու Մանաւազը  
 եղբայր կը դնէ Լրմենակէ, և Բազ՝ անոր եղ-  
 բորորդի։ Խորենացիի այս հաւատաւորը որ և  
 է ապացոյց չունի իրեն նպաստ, և լոկ կը ծա-  
 ուայէ մատնանշելու աւանդութիւն մը Խորիտ-  
 ուտեհներու՝ համահաւասար միւս երկու նախա-  
 րարութեանց վաղեմի ծագման նկատմամբ։ Նախ՝  
 սխալ ստուգարանութեան մը վրայ յեցած է խոր-  
 ուտեհներ կոչումէն «խու» արմատ մը հանելը (ուր-  
 կէ սկզբնական նահապետը այդ սայն) գի խուէն

պէտք է ձեանար խոռոչներ. կամ խոռոչներ  
 իմէ հաւատք պէտք է ընծայել առաջին նա-  
 հապետին անունին կրկնումով ազգանունին մը ա-  
 նորինակ կերտումին: Խորխոռոչներէն արմատ  
 կրնայ հանուիլ խորխոռ, որուն գարձեալ ար-  
 մատն է «խոր» և ոչ «խոռ» (ինչպէս «կարկա-  
 սել»-ի մէջ «կար» է արմատը, և «բարբառել»-ի  
 մէջ «բար»), և խորխոր կամ խորխոռ (ը գիրը  
 առի սաստկանալուն օրինակները ունիւր խե-  
 ռառ=խելահար, խորել=խոռել), ինչ նշանակէ  
 խիստ խոր (ինչպէս վաղվազ, խիստ շուտ) բառ  
 մը՝ որ շտեմանելը գործածուած իբր մարգու ա-  
 նուն, թողունք ազգանուն, այլ իրօք և խկապէս  
 իր տեսները երկու հնդ գործածուած պատշաճ-  
 օրէն իբր մակդիր քարտիկներու, այսպէս օւնիւր  
 խորխոր Բեծ-Մովսէս մէջ՝ Սեպկենի Առե գետի ա-  
 կանց մօտ բնական ստորերկրեայ այր մը (Ձ մը-  
 զոն երկայնութեամբ, և 2½ մեթր բարձրու-  
 թեամբ) որուն մէջէն կը շարունակէ գետը իր  
 ընթացքը և որուն Հարաւ-արեւմտեան վեր-  
 ջաւորութիւնը խորխոր անունով ծանցուած է  
 տեղացիներէն. Տոմ փայլին երեսք քանդակուած  
 է Եսորեստանի թագաւոր Եսորեստիբրայի (880  
 Ն. Ք.) պատկերը, բեռնադիր արձանագրօք: Երկ-  
 րորդ օրինակն է Վանի հռչակաւոր քարամայրի  
 հիւսիս-արեւմտեան կողմը արուեստաբար փոր-  
 ուած այրը (և 1/2 մեթրով 10 մեթր) որուն  
 մուտքը շրջանակուած է խաղչեան Երգիտաիս  
 Ա. թագաւորի արձանագիրներով: Այս այրն ալ  
 նշնպէս խորխոր անունով ծանցուած է: Ուրեմն,  
 եթէ խորխոռոչներու անունն ստուգաբանու-  
 թեամբ անոնց ծագումին գաղտնիքին խորը խա-  
 րախիւն է, աւելի բանաւոր չէ՝ ենթադրել թէ  
 խորխոռոչն անունը ստացել այս ցերեկ, խորխոր  
 կոչումն այսերու վրայ վաղեմի իմացութիւններու  
 ձգած յիշատակին հետ կապել ուղիւ է ժողո-  
 վաւորը այս հին նախարարութեան ծագումը, որ  
 հաւանորէն խալդեան — Եսորեստանական թը-  
 ախաններէն առած է սկիզբ: Մալխազ կամ Մաղ-  
 խազ մակդիրն ալ որ յատուկ էր այս նախարա-  
 րական տան, իբր ոչ-կրանեան բառ(1) (հին շըբ-  
 րանէ մը ձեւացած՝ ինչպէս ուրիշ — աղ վերջաւոր-  
 ութեամբ բառ մը, գուգազ) կուգայ նպաստել

այս ենթադրութեան: Մալխազի նշանակու-  
 թիւնն է իշխան, ինչպէս կը տեսնուի հետք կըց-  
 ւած հումանիշէն(2), «Առաջին իշխանն հայոց և  
 Մալխազ»՝ ինչպէս կոչուած է խորխոռոչն նախա-  
 րարը վաղմական Գահանակին մէջ՝ բոլոր նա-  
 խարարներէն նախաւոր գրութեամբ, և Բաբգէն  
 կաթողիկոսի թղթին մէջ (ուղղուած Հայոց  
 'ի Պարս) իշխուած նախարարներուն մէջ աւագ  
 տեղ կը բռնէ «Հայոց Եսպետ»-էն (Բագարատու-  
 նիներէն) անմիջապէս ետքը Եստաշիր «Հայոց  
 Մալխազ» (առաջին իշխան Հայոց նշանակու-  
 թեամբ): Խորենացի կը թուի անգիտանալ Մաղ-  
 խազ կոչման մակդիր ըլլալը, և յատուկ անուն  
 կը կարծէ ըսելով «Ե գլուխ (կարգէ թիկնա-  
 ցահայն)» Նահապետ Նոցա գլխաւորը ոմն՝  
 մինչդեռ թէ՛ Բիւզանդ, և թէ՛ Գարպէցի իբր  
 մակդիր կը գործածեն յայտնապէս Մալխազը,  
 ինչպէս «Վրիւ Մալխազ», Գարշնյալ Մալխազ՝  
 Ճիշդ ինչպէս այժմս պարսիկները կը գործածեն  
 «Միրզա» մակդիրը, իշխան նշանակութեամբ, երբ  
 բուն անունն յետադաս կը դնեն, Եստաշ Մալ-  
 զա, Մահմուտ Միրզա, Եստաշ իշխան, Մահ-  
 մուտ իշխան նշանակութեամբ: Թերեւս Եսորեստ  
 տանական ծագումի Ենթադրութեան աւելի մի-  
 տեղ տայ խորխոռոչն նախարարի մը Գաղիշոյ  
 անունը (հնչել Գաղիշու) որ ասորական է ինչ-  
 պէս Երգիշու, Ենիշու, Խայն, նկատելով Երի-  
 ւելքի մէջ անուանակոչութեան մասին ծայրա-  
 յեղ պահանջողականութիւն և նկատելով որ հայ  
 նախարարները թէպէտ կ'ախորժէին Պարսիկ, մա-  
 նաւանդ Պահլաւ անուններ դնել, բայց խիստ  
 քիչ է գործածութիւնը ասորականի:

ԱՐՄԻՈՒՆԻՔ. — Ոստան՝ Հաղամակերտ  
 (Պաշքալէ): Արծրունիներուն ծագումը Եսորես-  
 տանական ըլլալը ո՞չ միայն աւանդութիւն մըն  
 է, այլ նոյն իսկ այդ սոհմին մէջ խնամով պահ-  
 ուած և պարծանք յիշուած զրոյց մը: Հաւանա-  
 կան է որ խորենացի այդ նախարարական տանց  
 մէջ սերունդէ սերունդ հասցուած և հաղորդ-  
 ւած զրոյցներէն առնելով կը պատմէ հետեւեալը  
 «Այլ երբեմն 'ի մականական խաղաւ երկիցս  
 պատահալ շաւապայ Արծրունցոյ գզգզակն  
 հանել 'ի Զապհայ: Եւ նորա անեալ նմա մա-

(1) Պաղտատի մօտ 'այ Նանք Մալխա, որ կը նշանակէ  
 Գետ իշխանի, որ Թերեւս Եսորեստանցոց լեզուին մէջ Մալ-  
 խազ անունը:

(2) Այսպիսի համար իշխանու շատ կը հանդիպենք Բիւզանդի  
 մէջ. զոր օրինակ դպրիակք և սուցիչք էին արքային  
 Հայոցս: մատուցանէին նմա թիւրակէս և անդեղեղայս՝ Խայն:

կանան ասէ՛. ծանիր՝ զքեզդ՝ իսկ նորա պատաս-  
խանեալ թէ՛ Վլո՛, առէ, ձանաչեմ և զիս պը-  
քայորդի՝ ի սերմանէ Սանասարայ (և ունիմ իշ-  
խանութիւն ընդ եղբարս քս զարքն արքայի  
համբուրել) որպէս և անուանակոչեցեալս եմ՝  
Ինչպէս Գարագաշեան զիտել կուտայ, Խորենա-  
ցիի այս խօսքը՝ որպէս և անուանակոչեցեալս  
եմ՝ կ'անկնարկէ Երծրունի անուան նշանակու-  
թիւնը, որ սակայն ցարդ անծանօթ ծնացած է։  
Մեր կարծեցք, այդ Երծրունի անունը գործ  
չունի ոչ արծիւ=ունի՝ի հետ, ինչպէս Խորենա-  
ցիի բառախաղային ստուգաբանութիւնը կը հա-  
ւաստէ, ոչ ալ «Երծուիբ» կոչուած դաշտավայ-  
րին մէջ առաջին ըլլալուն, կամ Երզն աւանի  
մէջ բնակելուն, և ոչ արծուունգն կերպարանօր  
ըլլալուն ինչպէս Թովմա Երծրունի կ'առաջարկէ  
բացատրել։ Մեր կարծեցք, անուան ստուգա-  
բանութեան բանալին՝ փերոգրեալ որպէս և ան-  
ուանակոչեցեալս եմ՝ պարբերութեան մէջ է, և  
Երծրունի չէ այլ ինչ բայց ասորունի, պոյնքն  
ասորեստանցոց ցեղէն, ինչպէս հայ ժողովուրդը  
բնականաբար պիտի ձանձնար և յորջորջէր Ե-  
սորեստանէն այդ եկւորները։

Ճիշդ նոյն կերպով կազմուած ունինք ՊաՏ-  
լաուների (ՊաՏլաւ ցեղէ նախարարութիւն) և հա-  
ւանօրէն նոյնօրինակ կազմութիւն ունի Մամաու-  
նի՝ որ նշանակելու է Մամա կամ Մաա (=Մաա  
ցեղէ, համեմատել Սարաբոնի Matiané-ի հետ,  
Մամարդ կամ Մարդ, Սարաբոն կամ Տրպատ, Ե-  
սորգաս կամ Տրպատ)։ Եսորունի եղած է Ես-  
րունի, յետոյ Երարունի, ր-ի մուծմամբ ձայնա-  
ւորի և շահանի մէջ որուն կրկնակ օրինակը  
ունինք արշալուրջ բառին մէջ ուր յայտնապէս  
երկու ր ներս ալ օտարամուտ են (ուրիշ կողմէ  
ծանօթ են ր-ի մուծումներ՝ բարժանել, տար-  
ժանել բառերուն մէջ)։ և հուսի յետոյ Երարունի  
փոխուած է Երծրունիի, ս փոխուելով ծ-ի, ինչ-  
պէս յիսաուն փոխուած է ռամկին բերնին մէջ  
ձծօնուի, ինչպէս արշվիս փոխուած է արծ-  
վիսի (տես Սմբատ Գունդատապալի Ասիդք Են-  
տիդայ), ինչպէս նարայնի կամ նգրայնի փոխ-  
ւած է նօրայնիի։

Գէթ այս ստուգաբանութեամբ լուծում մը  
տուած կ'ըլլանք Խորենացիի Հաւասպ Երծրու-  
նիի բերանը դրած յորպէս և անուանակոչեց-  
եալս եմ՝ խօսքին։

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ. — Ոստան՝ անյայտ, գա-  
ւառ՝ Ընձիտ։ Ելս անուան ստուգաբանութիւնն  
է Սարբու անձիտ (Տէր Ընձտայ) որ միացուելով  
եղած է Սրուանձիտ և —եանց ազգանուանակոչ  
ածանցով Սրուանձտեանց։ Գայտնի է թէ Ընձիտ  
է հնագոյն ձևը այս գաւառին, և ոչ Ըանձիթ  
որ յետոյ մուտ գտած ձևն է այդ վաղեմի գա-  
ւառին անուան որ շատ հին ժամանակներէ ի վեր  
Եսորեստանցոց ծանօթ էր Enzite կոչմամբ (գա-  
սական հեղինակաց քով Enziten)։ Եսորես-  
տանցոց բանակները, Ռարաթի (Վանայ լճին  
հիւսիսակողմի երկիրները) արշաւելու առթիւ,  
շատ անգամ հոխան ըրած է յարձակման ա-  
ռարկայ ըրած են այս գաւառը, ամենէն վայ-  
րագը տեղի ունեցած ըլլալով Սալմանասար Բ.ի  
օրով (864-824 Ն. Ք.) որ ի հաւր և ի սուր մա-  
շնացուց զԸնձիտ, և իբր նշանակ կատարեալ նը-  
ւաճման, իր քանդակեալ պատկերը ձգեց հոն  
քարայրի մը վրայ։ Տարակոյս չկայ թէ ի վեր-  
ջոյ Ընձիտ ալ, ուրիշ նուաճուած երկիրներու պէս,  
ստացաւ Եսորեստանցի գաղութ և կառավարիչ,  
որոնցմէ մէկը արմատանալով Երկրին մէջ, իրեն  
սերունդ ձգեց՝ ձանչուելով Սարբու Ընձիտ  
(Տէր Ընձտայ)։ Սրուանձտեանց տանուտէր մը կը  
յիշեն Եղիշէ և Ղազար՝ իւր մին Վարդանանց  
կուռին հերոսներէն։ Բայց Բիւզանդի մէջ յիշ-  
ուած Ընձիտի իշխանները չեն կոչուած Սրուան-  
ձտեանց, այլ անունի հայացած ձևով Տէր Ընձ-  
տայ, այսպէս կը յիշէ Բիւզանդ, «Ղազարը որ  
էր իշխան Ընձտա»։ «Ղազարմուտ տէրն Ընձտայ»  
միշտ անմիջապէս հետը դնելով դրացի մեծ յո-  
փաց իշխանը։ Գոժուար է զատել Սրուանձտեանցը  
այս Ընձտայ տէրերէն և Գարակիւնի (որ Եղիշէի  
մէջ կ'երևի) Բիւզանդի մէջ յիշուած Ընձտայ տե-  
րերուն սերնդէն պէտք է եղած ըլլաւ։

(Շարունակելի)

Գ. ՓԱՌՆԱԿ